



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

22 օգոստոսի 2014թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի  
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով «Նազարաշեն» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

Համաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝  
«Նազարաշեն» ՍՊԸ-ն դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՆՏ ընդհանուր  
իրավասության դատարանների կողմից անհատական իրավական ակտով իր նկատմամբ ՆՏ  
քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների կիրառումը համարել  
ՆՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին պարբերությանը, 18-րդ հոդվածի 1-ին պար-  
բերությանը եւ 19-րդ հոդվածի 1-ին պարբերությանը հակասող»:

1. Դիմողը գտնում է, որ դատարանները՝ կիրառելով օրենսգրքի վիճարկվող դրույթը,  
ակնհայտորեն խախտել են օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզ-  
բունքը: Դիմողը նաեւ գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված  
վճիռն ամբողջովին անհիմն է եւ հակասում է «ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված կարեու-  
րագույն դրույթներին»:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննությունը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

վիճարկելով վերոհիշյալ դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը չի ներկայացրել պարզաձև իրավական հիմնավորումներ դրա հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՆՏ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համապետքստում ՆՏ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայրնել այն մասին, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և սահմանադրական դատարանի՝ ՍԴՌ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դատական կազմը գտնում է նաև, որ դատաքննության արդյունքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքներն ընդամենը նրա նկատմամբ գործով կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, եւ սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում:

Առաջնորդվելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության

հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, գտնում ենք, որ փվյալ դեպքում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՏՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Նազարաշեն» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

22 օգոստոսի 2014 թվականի  
ՍԴԴԿՈ/1-13